

616.912:614.47

ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ
ԺԱՂԿԻ ԴԵՄ

25/31
A 4563



ՀԱՅԳԵՏՀՐԱՏ

ԵՐԵՎԱՆ

1944

ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ ԾԱՂԿԻ ԴԵՄ ՊԱՐՏԱԴԻՐ ԵՆ

Բնական ծաղիկը հնազույն հիվանդություն-
ներից մեկն է: Բնական ծաղիկը հաղարամյակ-
ների ընթացքում համարվում էր ամենավտան-
գավոր հիվանդություն և բազմաթիվ մարդիկ
մեռնում էին ծաղկից:

Պատմությունը գիտե բնական ծաղիկ հիվան-
դությունից համառարած մահացման մի շարք
դեպքեր:

Արդպես էր անցյալում, երբ մարդիկ չգի-
տեին, թե ինչպես պայքարել ծաղկի դեմ:

Ներկայումս ծաղկի դեմ պայքարելու համար
մենք ունենք հզոր միջոց, դա պատվաստումն է
ծաղկի դեմ:

Ծաղկի դեմ պատվաստումը հայտարարեց

անգլիական բժիշկ Ջենները, մոտավորապես 150
տարի սրանից առաջ:

Ջենները նկատեց, որ մարդկանց ծաղկով
մառսայական հիվանդացման ժամանակ կովերը
հիվանդանում էին ինչ որ հիվանդությունով,
ընդ որում կովերի հիվանդության նշանները հի-
շեցնում էին մարդկանց ծաղկի նշանները: Մյուս
կողմից ժողովրդի մեջ դոյություն ուներ այն
համոզմունքը, որ եթե մեկը մի անգամ հիվան-
դանում է կովի ծաղկով, նա բնական ծաղկով
այլևս չի հիվանդանա:

Կով կթողը, որ հիվանդանում էր կովի
ծաղկով, շատ հաճախ կարելի էր տեսնել նրա
ձևոների վրա բշտիկներ, որոնք նման էին ծաղ-
կի բշտիկներին, այսինքն նման էին ծաղկի:

Ջենները հետազոտելով այդ դեպքերը հաս-
տատեց, որ այդ մարդիկ, դրանից հետո մարդ-
կային ծաղկով չեն հիվանդանում: Դրա հիման
վրա նա վերցրեց կովից վարակված կթող կնոջ
ձևոքերի բշտիկների պարունակութունը, ներ-
շնչեց երեխայի թևի մաշկի վրա արած կտրվածքի
մեջ: Այդ երեխան պատվաստվելով ծաղկի դեմ,
անընկալունակ դարձավ մարդկային ծաղկի նը-

կատմամբ: Մարդկությունը հարստացավ հան-
ճարեղ հայնտագործությամբ:

Յարական Ռուսաստանում չկային պարտա-
դիր պատվաստումներ ծաղկի դեմ, չնայած ծա-
ղիկով հիվանդանում էր տարեկան 100 հազարից
ավելի մարդ:

Նկատի ունենալով ընդհանուր պարտադիր
պատվաստումների չափազանց խաչոր նշանակու-
թյունը, 1919 թ. ՌՍՖՍՌ-ի Ժողովոմսովետը
հրապարակեց հատուկ դեկրետ ծաղկի դեմ պար-
տադիր պատվաստումների մասին: Այս պատմա-
կան դեկրետը ստորագրվել է Վլադիմիր Իլյիչ
Լենինի կողմից:

Հետագայում միութենական բոլոր ռեսպուբ-
լիկաներում հրապարակվեց նման հատուկ դեկ-
րետ ծաղկի դեմ պարտադիր պատվաստումների
մասին:

Ներկայումս Սովետական Միությունում,
չնորհիվ ծաղկի դեմ պարտադիր պատվաստում-
ների, բնական ծաղիկը մերացված է:

Սակայն այդ հաջողությունները մեզ իրա-
վունք չեն տալիս հանդստանալու և մեզանից
պահանջում են ավելի խստորեն հետևելու ծաղկի

դեմ պարտադիր պատվաստումների օրենքը կիրառելու:

Ծաղիկով կարող են հիվանդանալ ինչպես երեխաները, նույնպես և մեծահասակները: Ծաղիկի դեմ պատվաստման պաշտպանական ներդրութունը չի պաշտպանում մինչև մարդու կյանքի վերջը, այլ ժամանակի ընթացքում թուլանում է: Ահա թե ինչու անհրաժեշտ է կատարել կրկնակի պատվաստումներ:

Առաջին պատվաստումը ծաղիկի դեմ մեղ մոտ կատարում են երեխային սկսած երկու ամսականից մինչև մեկ տարեկան հասակը, երկրորդ պատվաստումը 4—5 տարեկան, երրորդը 10—11 տարեկան և չորրորդ պատվաստումը 18—20 տարեկան հասակում:

Սակայն բնակչության մեջ ծաղիկի դեպքեր նկատելու դեպքում, անց են կացվում ամբողջ բնակչության համատարած պատվաստումներ, ըսկըսած երկու շաբաթական հասակից:

Պատվաստումից առաջ ինչպես երեխաները, նույն և մեծահասակները պետք է ստուգվեն բժշկի և կամ բուժակի կողմից, եթե երեխան կամ մեծահասակը ունի բարձր ջերմաստիճան,

կամ հիվանդ է ստամոքս-աղիքային հիվանդու-
թյունով և ունի մաշկի լայնածավալ ախտահա-
րում, պատվաստումները ժամանակավորապես
հետաձգում են մինչև նրանց առողջանալը:

Պատվաստումը ծաղկի դեմ կատարվում է
մաքրության խիստ պաշտպանումով: Երեխայի
մայրը և նրան շրջապատողները պարտավոր են
նույնպիսի մաքրություն պաշտպանել նաև տա-
նը:

Պատվաստումից առաջ, երեխային պետք է
լողացնել և հաղցնել մաքուր սպիտակեղեն: Պետք
է հետևել որպեսզի երեխայի հագուստը չքայլի
պատվաստման տեղին: Պաշտպանեցե՛ք պատ-
վաստման տեղը կեղտոտվելուց: Ձի կարելի
ձեռք տալ պատվաստման տեղին:

Սովորաբար ծնողները հետաքրքրվում են
այն հարցով, թե կարելի՞ է ծաղկի դեմ պատ-
վաստված երեխային լողացնել:

Այդ հարցին կարելի պատասխանել դրական
կերպով, երեխային կարելի է լողացնել մինչ
պատվաստման տեղում հանդույցի երևան դալը,
իսկ հանդույցը դոյանալուց հետո շատ զգույշ
պետք է լինել (պատվաստման տեղին չկպչել):

Եթե պատվաստումն ընթանում է բարեհա-
ջող, այն ժամանակ 4-րդ օրը թեի կտրված տե-
ղում աստիճանաբար սկսում է գոյանալ կարմ-
րավուն հանգույց և մոտավորապես 8-րդ օրում
հանգույցը վեր է ածվում բշտիկի, որ իր մեջ
պարունակում է թարախ:

11 օրից հետո այդ բշտիկը, այսինքն ծաղիկը,
սկսում է հետզհետե չորանալ, նրանց տեղերում
գոյանում է մուգ գույնի կեղև, որը մի քանի
օրից հետո ընկնում է, թողնելով աստղաձև
և կամ թաթաձև սպիներ:

Եթե երեսայի թեի կտրվածքի տեղում
բշտիկներ չեն գոյանում, պետք է պատվաստել
մի անգամ ևս:

Ծաղկի գոյացման ժամանակ կարող է առա-
ջանալ ջերմաստիճանի բարձրացում: Չերմաս-
տիճանի բարձրացումից չպետք է վախենալ:

Ծաղկի դեմ պատվաստումները, որոնք կա-
տարվում են երկրորդ, երրորդ և չորրորդ ան-
գամ, սովորաբար ընթանում են ասանց ջերմաս-
տիճանի բարձրացման, այս կրկնակի պատվաս-
տումների դեպքում կտրվածքի տեղում գոյանում
է փոքրիկ հանգույց կամ բշտիկ, որն արագ

(024)

I
A 4563

կերպով չսրանում է և 6-րդ
ընկնում է և տեղը գոյանում պահպանում

Որպեսզի համոզվենք ծաղկի պատվաստումը
կատարված է, թե ոչ, անհրաժեշտ է ցույց տալ
բուժ աշխատողներին: Եթե պատվաստումը կա-
տարվում է առաջին անգամ, այն ժամանակ
ծաղկի պատվաստման ստուգումը կատարվում է
7-րդ օրը պատվաստումից հետո, իսկ ծաղկի
կրկնակի պատվաստման դեպքում ստուգումը
կատարվում է 4-րդ, 5-րդ և 6-րդ օրերին:

Ստուգումը կատարվում է պատվաստումների
կայանում, կամ ծաղկի պատվաստողները
ստուգում են բնակարաններում: Ծաղկի պատ-
վաստման մասին տեղեկանք կարող են ստանալ
միայն նրանք, ովքեր ստուգման են ենթարկվել:

Ծաղկի պատվաստումը մեր երկրում պար-
տադիր է. նա, ով կիսուսափի ծաղկի պատվաս-
տումից, ոչ միայն ինքն է ենթակա հիվանդաց-
ման, այլև վտանգ է ներկայացնում իր շրջապա-
սողների համար:

Հայկական ՍՍՌ-ի Առողջապահության Կոմիտե

Պատ. խմբագիր պրոֆ. Ա.Լ.ԲԱՆՆԵԱՆ Ա. Բ.

1944 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0039690

Պատվեր 131. Տիրած 5000:

տալի տպարան, Երևան, 1944

Գ.Ե.Ս.Ի.Ի.Ի.

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

ԲԱՆԱԿԱՆ № 2

ԳՂՂՂՂՂՂՂ

I
A 4563